ԱՐԹՈՒՐ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ARTUR MELKONYAN

ԴՐՈՒԶՆԵՐԻ ԿՐՈՆԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սիրիայի և Լիբանանի պատմության համատեքստում իր ուրույն տեղն ունի այդ երկրների դրուզական համայնքների ուսումնասիրությունը: Դրուզների կյանքում կրոնն ունի չափազանց մեծ տեղ, նրանք ապրում են փակ «հասարակության» ներսում:

Դրուզները մինչ օրս իրենց հաստատուն տեղն ունեն Մերձավոր Արևելքի այն երկրներում, ուր առկա են նրանց համայնքները: Հակամարտություններով լի այս տարածաշրջանում դրուզներն ստիպված էին երկար ժամանակ պայքարել սեփական համայնքների ինքնավարության, համայնքների համար քիչ թե շատ տանելի պայմաններ ապահովելու համար:

Դրուզների հավատքը սկիզբ է առել Եգիպտոսի Ֆաթիմյան Խալիֆա Ալ-Հաքիմի (386-411/996-1021) կառավարման շրջանում: Համաձայն իսմայիլական հավատքի, որն այդ ժամանակ արդեն պաշտոնապես հաստատվել էր Եգիպտոսում, Ալ-Հաքիմը, որպես իմամ, համարվում էր իսլամի հեղինակավոր պաշտպանը՝ նշանակված Աստծո կողմից, մարդկության մեջ զբաղեցնելով անպիսի տեղ, որը համապատասխանում է ակտիվ բանականության ,al-'akl al-fa' 'al' տիեզերական սկզբունքին, և ծառայում է իսմայիլական կրոնական հիերարխիայի անառարկելի ղեկավար[1]: Իր կյանքի վերջին տարիներին նա ցանկանում էր ընդունվել որպես աստվածային կերպար:

1017թ. խալիֆա Ալ-Հաքիմը հայտարարեց իրեն երկրի վրա Աստված՝ մարդու մարմնով, և այդ օրը՝ 1017թ. մայիսի 30-ը, դրուզները համարում են իրենց համայնքի հիմնադրման օրը[2]: Այդ օրն Ալ-Հաքիմ Ադ-Դարազիին և Համզա Իբն Ահմեդին հանձնարարեց դրուզական կրոնական ուսմունքի շուրջ մարդկանց հավաքագրման մեծ գործը՝ կանչը[3]: Խալիֆայի կողմից Ալ-Դարազիին այդ գործի հանձնարարումը պատահական չէր, քանի որ վերջինս կարևոր դեր էր խաղում Եգիպտոսում անցկացվող բարեփոխումները ձևավորելու և իրականացնելու, ինչպես նաև Ֆաթիմյանների նվաճած նահանգները կառավարելու գործում:

---

[1] The Encyklopaedia Of Islam, edited by B. Lewis, Ch. Pelat and J. Chacht, vol 2, Leiden, 1983, p. 950.
[2] Dilip Hiro, The Essential Middle East, A Comprehensive Guide, New York, 1996, p.126.
[3] Moustafa F. Mokarem, Mo'wahedoon Druze, London, 2000, p. 23.

Ադ-Դարազին, որին խալիֆա Ալ-Հաքիմը հանձնարարել էր հավատակից-ների հավաքագրումը, լայն իրավասություններով և օգնականների խմբով գործուղվեց ներկայիս Սիրիա և Լիբանան: Նա, հակառակ սուննիների և մա-սամբ նաև շիաների դիմադրության, կարողացավ համախոհներ գտնել Սայդայի և Սուրի շրջաններում և Ուադի Ալ-Թայմում, ապա հյուսիսում՝ մինչև Հալեպի շրջան ձգվող հարթավայրում, որից հետո Լեռնալիբանանի կենտրոնական ու հարավային հատվածներում: Ըստ որոշ չճշտված աղբյուրների՝ այս նոր կրոնական հավատքի ներկայացուցիչները հասան մինչև անգամ Հնդկաստան ու Չինաստան: Վերջիններիս եռանդուն քարոզչությունն առավել արգասավոր եղավ ընչազուրկ և աղքատ խավերի շրջանում: Նա նորահավատներին կազ-մակերպեց որպես ուրույն դավանության հավաքականություն: Հավատքի հետևորդներն իրենց քարոզչի անունով էլ կոչվեցին դրուզներ[4]:

Դրուզական ուսմունքն ավարտին հասցրեց և վերջնականապես խմբագրեց Աս- Սայիդ Աբդալլահ Աթ -Թանուխին (1417-1479թթ)[5]:

Համաձայն դրուզական ուսմունքի, դրուզը երբեք չի կարող ընդունել այլ կրոն, քանի որ դա նշանակում է ազգային պատկանելության կորուստ: Որևէ մեկը չի կարող դառնալ դրուզ, եթե նրա հայրն ու մայրը դրուզ չեն: Հնարավոր չէ ընդունել դրուզական կրոնադավանական ուսմունքը, քանի որ դրան անցնելու ինստիտուտ չի ձևավորվել: Հոգու մասին ուսմունքի շուրջ դրուզներն ունեն ուրույն վերաբերմունք, նրանք հավատում են հոգու վերածնմանը: Նշվում է, որ եթե մի դրուզ մահանում է, ապա նա վերածնվում է մեկ այլ դրուզի մեջ: Հետաքրքիր է ընդգծել, որ իսլամում տարածված ուսմունքն Ահեղ Դատաստանի օրվա (Յամալ-դին) վերաբերյալ, դրուզների հավատքում բացակայում է: Դրուզների մոտ առկա է այսպես կոչված «թաքիայի» դոկտրինան, որի էությունը մտովի վերապահումն է[6]: Համաձայն դրա, հավատացյալը, որն ապրում է թշնա-մական միջավայրում, կարող է առերես ընդունել տվյալ միջավայրի կանոններն ու պայմանները, իր հոգում, սակայն, պահելով իրական մաքուր հավատքը: «Աթ-թաքիայի» ուսմունքը ձևավորվեց Ալ-Հաքիմ խալիֆայի մահվանից հետո: Խալիֆայի հետնորդ Ալին սկսեց հետապնդումներ այս նոր կրոնական ուղղու-թյան հետևորդների հանդեպ: Հալածանքների արդյունքում Համզա Իբն Ահմեդիի սան Բահա -Դին Առաջինը կիրառեց «աթ-թաքիայի» մեթոդը[7]:

---

[4] Նաջարյան Ե., Լիբանանը 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 31:
[5] The Encyklopaedia Of Islam, edited by B. Lewis, Ch. Pelat and J. Chacht, vol 2, p. 957.
[6] Նույն տեղում:
[7] Charles Henry Churchill, The Druzes and Maronites Under Turkish Rule from 1840 to 1860, London, 1980, p. 115.

Բերված տեսության գործնական ապացույցն Ալ-Դարազիի հետևորդների գործունեությունն էր: Այդ առիթով նշենք, որ կարճ ժամանակահատվածում Դարազիի հետևորդները դարձան կազմակերպված, մարտունակ ու զինված հողամշակների ինքնատիպ ներփակ եղբայրություն՝ գաղտնանշաններով իրար ճանաչող գիտուն ձեռնադրյալ նվիրյալների ընտրանիով, որն իր հետևից տանում էր չձեռնադրված «անգետ» բազմությանը: Բոլորն արտաքին տարբերանշաններից զուրկ էին: Հավաքվում էին իսլամական մզկիթի հետ ոչ մի նմանություն ու առնչություն չունեցող հատուկ օթյակներում կամ աղոթարաններում (հալուա): Խորհուրդն իրականացնում էր ոչ միայն կրոնական պաշտամունք, այլև քննարկում ու լուծում էր տեղական համայնքի սոցիալական, տնտեսական ու քաղաքական գործերը՝ ընդհանուր համաձայնության գալով: Բոլորը կարող էին «թաքիայի» օրենքով անհրաժեշտության դեպքում քողարկել իրենց հավատալիքները և կամ ձևականորեն ենթարկվել տիրապետողների կրոնին: Չձեռնադրվածների բազմությունը (ջուհալները) բոլոր դեպքերում պարտավոր էր միշտ և ամենուրեք միասնականություն հանդես բերել և ենթարկվել ձեռնադրյալների (աջավիների) խորհրդի կարգադրություններին [8]:

Հետաքրքիր է նաև դրուզների վերաբերմունքը կանանց հանդեպ: Եթե իսլամը բավական մեծ սահմանափակումներ էր դնում կնոջ առջև, ապա դրուզների մոտ կնոջ տեղն ու դերը տարբերվում են[9]:

Դրուզական համայնքն իրենից ներկայացնում է փակ հասարակություն, որը ղեկավարում է ուքքալը (խելացի, գիտակ մարդ) և նա առաջնորդում է հավատացյալ ժողովրդի լայն զանգվածներին (ջուհալներ): Ենթադրվում է, որ ուքքալների մոտ առկա է եղել բավական բարդ աստիճանակարգ[10]: Եղել են նաև հոգևոր առաջնորդներ, որոնց կոչում էին աջավիներ՝ կատարյալներ:

Ուքքալ կարող է դառնալ 40 տարին լրացած, երկար տարիներ կրոնական և փիլիսոփայական դասընթացներ անցած մարդը: Ընդունված է կարծել, որ օրինակ Լիբանանի դրուզների հայտնի առաջնորդներից ոչ Քամալ Ջումբլաթը, ոչ էլ Վալիդ Ջումբլաթո ուքքալներ չեն: Իսմայիլական գաղափարախոսության առաջացման դեռ վաղ փուլում դրուզական համայնքում առանձնացավ երկու ասպեկտ՝ «արտաքին» էզոթերիկ (ազ-զահիր), որը հասանելի էր համայնքի շարքային անդամների համար, և «ներքին» էզոթերիկ (ալ-բատին), որը հայտնի էր միայն «տեղեկացվածներին»՝ ալ-խասսա, որոնք զբաղեցնում էին իսմայիլական աստիճանակարգիքի բարձրագույն աստիճանները: Ներքին էզոթերիկ

---

[8] Betts Robert Benton, The Druze, Yale University Press, 1988, p.16.
[9] Abu-Izzedin,Nejla M., The Druzes, Leiden, 1993, p.230.
[10] Charles Henry Churchill, նշվ. աշխ., էջ117:

դոկտրինան պարունակում է երկու մաս՝ ատ-տավիլ՝ Դուրանի այլաբանական մեկնությունը, և ալ–հակիկ (ճշմարտություններ)՝ փիլիսոփայական ու աստվածաբանական գիտելիքների համակարգ, որի նպատակն է մեկնաբանել «բարձրագույն» ճշմարտությունները[11]: Այս ամենով հանդերձ, սակայն, դրուզներն իրենց համարում են անաղարտ իսլամին ամենամոտ կանգնած ուղղությունը ոչ սուննի, ոչ էլ շիա, այլ այն 73 իսլամական խմբավորումներից մեկը, որի մասին ժամանակին ակնարկել է Մուհամմեդ մարգարեն: «Իմ երկրի, իմ հավատքի ժողովուրդը պետք է ապագայում բաժանվի 73 խմբերի, մեկը կպահպանվի, մնացած մյուսները՝ ոչ»[12]:

Դրուզների կրոնը շատ մասնագետներ համարում են հինդուիզմի, իսլամի և քրիստոնեության յուրատեսակ խառնուրդ, որում առկա են գնոստիցիզմի՝ և իրանական մագիայի սկզբունքները: Դրուզական կրոնը հիմնված է գործնական միստիցիզմի այն պարզ տարրերի հիման վրա, որոնք ժամանակ առ ժամանակ երևում են: Դրանք կարող են հայտնվել ոչ հայտնի անուններով՝ կաբբալիզմ (հինդուիզմի միստիկական-պաշտամունքային ուղղություններից մեկը, որն առաջացել է Բաբելոնում ք.ա. 6-րդ դարում), թեոսոֆիա (հունարեն teos-Աստված և sopia-իմաստություն բառերից, լայն իմաստով թեոսոֆիան միստիկ ուսմունք է, որը հավակնում է բացահայտել «աստվածային հատուկ գաղտնիքները»)[13], օկուլտիզմ (լատիներեն occultus գաղտնի բառից, այն ևս միստիկական կրոնական ուսմունք է, որը պնդում է, որ մարդու և տիեզերքի մեջ կան թաքնված, գաղտնի ուժեր և որ մարդը կապ ունի անդրաշխարհի հետ) և այլն[14]:

Դրուզները, որոնք անհրաժեշտության դեպքում խառնվում էին քրիստոնյաներին, իսկ հաճախ էլ պատրաստ էին կարդալ Դուրանը, երբեք իրենց հանրային հավաքներին չէին թույլատրում մասնակցել այլակրոնի, ով կարող էր թափանցել իրենց կրոնական ուսմունքի գաղտնիքների մեջ: Համաձայն նրանց ուսմունքի, միայն գիտակցությունն էր շփվում հոգու հետ, որն էլ ծնում էր կյանքը և Վերին Իմաստության աստվածային կրակը (ինչպես իրենք էին ասում Տի-Սեամին), որը, սակայն, պետք է գաղտնի պահվեր բոլոր նրանցից, ովքեր չէին

---

[11] Гордон Ньюби, Краткая энциклопедия ислама, "ФАИР-ПРЕСС" (2007), www.dic.academic.ru

[12] Charles Henry Churchill, նշվ. աշխ., էջ118.

[13] հունարեն- gostikos-բանիմաց բառից, այն կրոնափիլիսոփայական դուալիստական ուղղություն է, ժամանակագրական առումով առնչվում է ուշ անտիկ դարաշրջանին՝ 1-5-րդ դարեր, ներառում է տարբեր քրիստոնեությունից, հրեական կրոնական ուսմունքից, հելլենիստական անտիկ դիցարանից:

[14] Советский Энциклопедический Словарь. А. М. Прохоров и редакторы, Москва, Советская энциклопедия., 1984. с. 1600.

[14] Блатавская Е.П., Ламы и друзы, М., 1975, с.94.

հավատում Համզային, որն այլ անունով հայտնի էր ալ-համմա կամ հոգևոր իմաստություն[15]:

Ըստ դրուզների, հոգու առաջադրանքն իմաստության փնտրտուքն է, իսկ երկրային իմաստության էությունը կայանում էր նրանում, որ գիտակցվի և ճանաչվի ունիվերսալ իմաստությունը կամ «Աստված», ինչպես անվանում են այդ նույն սկզբունքն այլ կրոնների ներկայացուցիչները: Համեմատելով այլակրոնների՝ բուդդայականների կամ լամայականների հետ, որոնք ասում են «Բուդդա», դրուզների մոտ դա հավասարազոր է «Իմաստությանը»: Դրուզներն հազվադեպ են անցնում այլ կրոնի: Նրանք ամուսնանում են միայն իրենց համայնքի ներկայացուցիչների հետ, ամուր կերպով պահում են իրենց ավանդույթները՝ ընդդիմանալով իրենց գաղտնիքները բացահայտելու փորձերին: Միաժամանակ նշենք, որ նրանք մոլեռանդ հավատացյալներ չեն և չեն փորձում դեպի իրենց կրոնը տանել այլակրոններին:

Համզա իբն Ալիի խմբագրած դրուզական դավանաբանությունը ստեղծված է իսլամական հենքի վրա: Դավանանքի հիմքը կազմում է «Ռասսուլ ալ-հիքմա» (Նամակներ իմացության մասին) գիրքը, որը կազմված է Ալ-Հաքիմի և առաջին դրուզ քարոզիչների նամակներից[16]:

Դրուզները չեն մերժում այլ իսլամական հոսանքները, սակայն իրենց կրոնական ուսմունքը համարում են ամենաճշմարիտը:

Դրուզների համար պարտադիր է միակնությունը: Աղոթքը կարող է ընդհատվել մեդիտացիայով (ներշնչանքով) և աղոթելը պարտադիր չի համարվում: Հոգևոր հավաքները հիմնականում անց են կացվում անմարդաբնակ կամ գաղտնի բնակավայրերում: Հոգևոր առաջնորդի՝ աջավիի գլխավորությամբ, դրուզները կարդում են իրենց սուրբ գրքերը և զբաղվում մեդիտացիայով հինգշաբթի օրերին՝ մայրամուտից հետո: Դրուզական համայնքն Ալ- Հաքիմ խալիֆային համարում է միակը, որի մեջ առաջին անգամ մարմնավորվել է Աստվածը: Ըստ հավատքի նա պետք է երկրորդ անգամ հայտնվի ապագայում: Դրուզները հավատում են, որ Աստված իրեն բացահայտել է տալիս մի շարք տարբեր փոխակերպումների միջոցով: Աստծու առաջին հայտվելը Կատարյալ Մտքի միջոցով Համզա իբն Ալիի և Ադ -Դարազիի մեջ էր[17] :

Համաձայն դրուզական հավատքի համայնքի անդամներն Աստծո՝ «Ալ-Հաքիմի», հերթական հայտնությունից հետո կդառնան աշխարհի տերն ու տի-

---

[15] Նույն տեղում, էջ 95:
[16] Moustafa F. նշվ. աշխ., էջ 20:
[17] Նույն տեղում, էջ 21:

ռակալը, մուսուլմանները, քրիստոնյաները և հրեաները՝ նրանց ստրուկները: Աստծու հերթական հայտնությունը դրուզների մոտ նշվում է Ոսկե դարում:

Դրուզների միստիկական համակարգում կան 5 «մարգարեներ» կամ «Բարձրագույն իմաստության բառը» մեկնողներ, որոնց պարտականություններն անցնում են ժառանգաբար: Նրանք ստեղծվել են, որ պայքարեն ընդդիմադիրների դեմ[18]: Այդ հինգ մարգարեներն են նաև Կանչը տարածողները: Նրանք են.

1.Համզա Իբն Ահմեդի կամ Ալ-Համմա (Հոգևոր իմաստություն), որը դիտվում էր որպես առաքելություն, որի միջոցով խոսում է Կատարյալ Իմաստությունը.

2.Իսմայիլ կամ Տի-Միամի (Կատարյալ Հոգի), որը դրուզներին պատրաստում է «իմաստության» հասնելուն.

3. Մուհամմեդ (Բառ), որի պարտականությունն է հատնել եղբայրների վարքին և հոգալ նրանց կարիքները.

4.Սելամա (նախորդող), որը համարվում է աջ թևը.

5.Մոկշատանա Բոհաէդին (ժառանգող), որը համարվում է ձախ թևը:

Վերջին երկուսը Համզայի և Եղբայրության միջև սուրհանդակ-մարգարեներն են: Նրանք մշտապես անհայտ են մնում բոլորի համար. բացի վերին ուքքալներից[19]:

Գրականության մեջ կարելի է հանդիպել նաև այն դրուզ մարգարեների անունները, որոնք քարոզել են այդ ուսմունքը տարբեր երկրներում: Այսպիսով, նրանք են՝ Ալի Ալլալը՝ Հնդկաստանում, Ալբարը՝ Պարսկաստանում, Էլիան՝ Եմենում, Մոիլն ու Կախիմն Արևելյան Աֆրիկայում, Մովսեսն ու Հադդին՝ Կենտրոնական Ասիայում, Ալբուն ու Մանսուրը՝ Չինաստանում, և Բուդդիան՝ նույն ինքը Բոհաէդին՝ Թաթարստանում: Վերջինիս մասին ասում են, թե երկրի վրա նա եղել է երկսեռ: Մտնելով Ալ-Հաքիմ խալիֆայի մեջ՝ չար սատանան ստիպեց նրան ինքնասպան լինել, իսկ ապա ուղարկեց Համզային, որպեսզի սովորեցնի իր ուսմունքը և Լիբանանում հաստատի Եղբայրություն: Նշվում է, որ, փաստորեն, Ալ-Հաքիմը պարզապես դիմակ էր և գործիք Բուդդիայի (Բոհաէդինի) ձեռքում[20]:

Դրուզական դավանանքում կա մի հասկացություն՝ «տանսաուխ», որը բնութագրում է հոգիների վերաբնակեցումը, տեղափոխումը մի տեղից մյուսը: Դրուզական հավատքում բոլոր հոգիները գտնվում են «Կատարյալ Հոգու» վերահսկողության ոլորտում: Ոգին դա շունչ էր առանց մարմնի: Աստված «Հոգուն» մարմին տվեց, որպեսզի մարդիկ տարբերեն լավն ու վատը, չարն ու բարին: Հոգին ի սկզբանե ուներ ընտրության իրավունք և այն սնվում էր հոգևոր

---

[18] Блатавская Е.П., նշվ. աշխ., էջ 96:
[19] Նույն տեղում, էջ 97:
[20] Նույն տեղում, է ջ 98:

գիտելիքներով: Այն հոգիները, որոնք վատն էին ու անհաջող, մարդկանց մեջ չէին ծնվում, այլ կենդանիների ու բույսերի:

Դրուզների կարծիքով գոյություն ունեն շատ քիչ քանակությամբ իդեալական հոգիներ, որոնք մի մարդու մահվան պահին կարող են մտնել նորածնի մեջ: Հոգու հասկացության մասին դրուզական սահմանափակումները մոտ են դետերմինիզմին, որտեղ բացակայում է կամքի ազատությունը, սակայն դրանով հանդերձ, հոգին, որը ծնվել է հավերժական կամքի կրակներից, անմահ է: Հոգիների վերափոխման մասին ուսմունքը կարևոր գործոն էր դրուզական կավալերների (զինված ուժեր) բարոյահոգեբանական պատրաստվածության համար: Ըստ նրանց, քանի որ հոգին վերածնվում է նոր մարմնի մեջ, ապա մահը դրուզ զինվորների համար սարսափելի վախ չէր, քանի որ նրանք կռվի էին գնում՝ գիտակցելով, որ նորից պետք է ծնվեն[21]:

Հատկանշական է այն, որ հարցականի տակ է առնվում կնոջ հոգու վերափոխումը: Մի շարք աղբյուրներ նշում են, որ համաձայն դրուզական հավատալիքների, կնոջ հոգին անմահ չէ, սակայն աղբյուրների մեկ այլ, ավելի արժանահավատ խումբ հակված է այն կարծիքին, որ հոգին անսեռ է, հետևաբար կարող է վերածնվել ինչպես տղամարդու, այնպես էլ կնոջ մարմնի մեջ: Այս դրույթը հետագայում իր արտացոլումն է գտել հոգեվերլուծության լիբանանյան դպրոցի հայացքներում[22]:

«Տանսաուխի» մասին դոկտրինան իր արտացոլումն է գտել նաև դրուզական գրականության և բանահյուսության մեջ, որոնցում ներակայացված հերոսները բնութագրվում են իրենց ապրած բազմաթիվ կյանքերով:

Հետաքրքիր է ընդգծել այն փաստը, որ դրուզական հավատալիքները զգալիորեն տարբերվում են իսլամի կրոնական հավատալիքներից: Դրուզների հավատքը բացառապես մեկն է[23]: Դրուզների համար ընդունելի չեն մուսուլմանական 5 կրոնական հիմնասյուները: Այս տեսանկյունից նրանց իսկապես չի կարելի մուսուլման համարել, քանի որ նրանց հավատքն ունի ավելի շատ «հակահիսլամական» բնույթ, որը կարելի է բացատրել օրինակ, շարիաթի մերժմամբ: Ինչ վերաբերում է իսլամադավանիներին, ապա նրանց համար Համզա իբն Ալիի՝ իսկական մարգարե լինելու դրուզական կարծիքը հակասում է Ղուրանին:

Շիաների և սուննիների մոտեցումները դրուզների հանդեպ ունեն որոշակի առանձնահատկություններ: Որպես օրինակ նշենք, որ սուննիները մերժում

---

21 Алексей Евтушенко, Друзы, www.holidayinisrael.com

22 Ю.Ларичев., Друзы, www.rustimes.com

23 Betts Robert Benton, The Druze, p. 18.

են կենդանիներում հոգիների գոյության փաստը, որոնք առաջ էին քաշել դրուզները: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ սուննիների՝ դրուզների նկատմամբ բացասական վերաբերմունքն ունի խոր արմատներ, քանի որ այն սկսվում է դասական իսլամի ժամանակաշրջանից[24]:

Շիաներն իրենց հերթին չեն ընդունում իսմայիլականությունից սկիզբ առնող դրուզական այն համոզմունքը, համաձայն որի տիեզերքի սկզբնապատճառն Աստված է և որ նա ունի 5 էմանացիաներ: Իրենք՝ իսմայիլականները, հերքում են Ալ-Հաքիմ խալիֆայի՝ Աստծու մարմնավորում լինելու կարծիքը[25]:

Դրուզներն ունեն հոգևոր յոթ առաջնակարգ հասկացություններ: Դրանք են՝ ճշմարիտ խոսք, եղբայրների պաշտպանություն, սխալների վերացում և ստի մերժում, հրաժարում հակառակորդից, Աստծո առաջ խոնարհում և Աստծո փառաբանում, Աստված է բարու նախասկիզբը, համընդհանուր հնազանդություն նրա կամքին[26]:

Դրուզ հոգևորականները հոգիների արարման սկիզբը համարում են 1017թ., իսկ ավարտը՝ 1043թ., երբ Բահա Ադ-Դին Ալի իբն Մուհամմեդը հայտարարեց, որ հավաքն ավարտված է: 1043թ. փակվեցին «Հավատքի Դարպասները» (դրուզական կրոնադավանական տերմին) և ավարտվեց դրուզների համախոհների ներգրավվումը: Դրուզները գտնում են, որ այն կատարվեց Ալ-Հաքիմի հրամանով, քանի որ Աստված համարեց, որ աշխարհում դրուզ հոգիների թիվն արդեն բավականաչափ է, և ով չի դարձել դրուզ նա «ուշացել» է: Դա է պատճառը, որ ոչ դրուզը երբեք դրուզ չի կարող դառնալ:

The appearance of Druze religious doctrine takes place in the 10-11th centuries, and is connected with the name of Muhammad Ibn Ismail Ad-Darazi, and in some parts of Syria, that doctrine of Hamza Ibn Ahmad is spread, that the Egyptian khalifa Al-Haqim Ibn Allah originating from the Fatima dynasty is the embodiment of God. Speaking about the name we must remember, that they call themselves al-muhaviduhi (tauhidi) the followers of one Divinity. In fact, from the beginning of the 11th century. The Druzes community is separated from the Shia community, which they Druzes consider as a religious self direction.

According to Druze religious doctrine, Druze can not ever accept any other religion, because it would mean the loss of national identity. Nobody can become Druze, if his mother and father are not Druze. It's not possible to accept Druze religious doctrine.

---

[24] Дафтари Ф., Краткая история исламизма, М., 2003, с. 108.
[25] Նույն տեղում, էջ 111:
[26] Блатавская Е.П.,նշվ. աշխ., էջ 100: